# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:
2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:
3. Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (italic), չափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:
4. Հայերեն հատուկ անունները ու եզրերը լատինատառ տառադարձելիս հետևել Library of Congress Romanization Table-ին՝

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա – a | բ – b | գ – g | դ – d | ե – e | զ – z | է – ē | ը – ĕ | թ – t‘ | ժ – zh |
| ի – i | լ – l | խ – kh | ծ – ts | կ – k | հ – h | ձ – dz | ղ – gh | ճ – ch | մ – m |
| յ – y | ն – n | շ – sh | ո – o | չ – ch‘ | պ – p | ջ – j | ռ – ṛ | ս – s | վ – v |
| տ – t | ր – r | ց – ts‘ | ւ – w | փ – p‘ | ք – k‘ | եւ– ew | օ – ō | ֆ – f | |

5. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.

   ա. Գրքերի և պարբերականների վերնագրերը գրել *շեղատառ* (italic):
   բ. Հոդվածների (և գրքերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:
   գ. Ծարքերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:
   դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
   ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ ճանաչելի ձևով համառոտել:

զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել՝ «նույնի» և աշխատության տվյալները:

է. Սրանց գումարվում է *ԲՄ*-ում ավանդական դարձած՝ **հեղինակի անունը թավ** (bold), իսկ ***խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ*** (bold + italic) գրելու պահանջը:

Օրինակներ՝

**Դաւիթ Անյաղթ**, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները ***Ս. Ս. Արևշատյանի***, Երևան, 1960, պրակ ժէ., էջ 132:

**Paul J. Alexander**, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

**Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ[1], ԺԵ. հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437

**Philonis Alexandrini** *Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca*, ed. ***F. Petit*** (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978

6. Հանախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:
7. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):
Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):
Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):
Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):
Փրզ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits* (Coulie – 2002), http://sites. uclouvain. be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles. pdf):

[1] = Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են *ՊԲՀ* = Պատմաբանասիրական հանդես, *ԲՄ* = Բանբեր Մատենադարանի, *ՀԱ* = Հանդէս ամսօրեայ, *Լ* = Լրաբեր հասարակական գիտությունների, *ԲԵՀ* = Բանբեր Երևանի համալսարանի, *REArm* = Revue des Études Arméniennes: